



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՍԸ  
ՄԵՐ ՏԻՐՈՋ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ  
ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ  
(Սուրբ Էջմիածին, 6 Յունուարի, 2012 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Որ ընդունի գՈրդին, ընդունի եւ զկեանսն.  
եւ որ ոչ ընդունի գՈրդին Աստուծոյ, եւ ոչ զկեանսն ընդունի»  
(Ա Յովհ. Է 12):

Սիրելի հաւատաւոր ժողովուրդ ի Հայրենիս եւ ի Սփիւռս.

Այսօր մեր հոգիներում եւ մտահայեացքի առջեւ աշխարհակեցոյց «մեծ եւ սքանչելի» այն խորհուրդն է, որ ճառագեց երկնքում եւ երկրի վրայ, երբ պայծառ աստղը կանգնեց Բեթղեհէմեան քարայրից վեր եւ հրեշտակները աւետեցին Փրկիչ Աստուածորդու Սուրբ Ծնունդը՝ ասելով. «Այսօր Դաւթի քաղաքում ծեղ համար ծնունեց մի Փրկիչ, որ օծեալ Տէրն է» (Դուկ. Բ 11): Աւետարանները պատմում են, թէ ինչպէս հեռաւոր երկրներից եկած իմաստուն մոզեր եւ մերձակայքում գտնուող հովիւներ փութացին դէպի քարայրը եւ երկրպագելով խանձարուրով փաթաթուած նորածին Մանուկին՝ ողջունեցին Փրկչի գալուստը աշխարհ:

Սքանչելախորհուրդ Սուրբ Ծննդեան տօնին ամենքս ուխտաւոր ենք Բեթղեհէմի՝ այցելելով Սուրբ Երկիր կամ մեր հոգին դարձնելով Բեթղեհէմ՝ մեզ շնորհուած հաւատքի իմաստութեամբ ու զօրութեամբ երկրպագելու Մանուկ Յիսուսին, Նրան ճանաչելու եւ ընդունելու իբրեւ Աստուծոյ Միածին Որդին եւ ճանապարհը յաւիտենական կեանքի, ինչպէս գրում է առաքեալը. «Ով ընդունում է Որդուն, ընդունում է նաեւ կեանքը, եւ ով չի ընդունում Աստուծոյ Որդուն, չի ընդունում նաեւ կեանքը»: Այսօր «Հայոց Բեթղեհէմ» միածնաւջ այս սուրբ տաճարում եւ նրա լոյսով հաստատուած մեր բոլոր եկեղեցիներում մենք, սիրելիներ, եւ ազգիս զաւակունք ցնծութեամբ օրհնաբանում ենք ծնունդը մեզ համար աշխարհ եկած Փրկչի եւ խոստովանում.- Դու ես մեր Տէրը: Դու ես մեր Փրկիչը: Դու ես աղբիւրը մեր կեանքի եւ ճանապարհը յաւիտենութեան: Այս խոստովանութիւնը լուսաւորել եւ լուսաւորում է մարդկութեան ուղին: Քրիստոսով Աստուծոյ սէրը յայտնուեց մարդկանց, Աստուածորդին աշխարհ եկաւ վերացնելու մեղքը, փարատելու մահուան խաւարը եւ մարդկութեանն առաջնորդելու դէպի իր

Արարիչը՝ ընդունելու համար յաւիտենական կեանքը: Քրիստոսով աստուածային սէրը տարածուում է ողջ աշխարհի՝ մարդու եւ բնութեան վրայ, միշտ բարենորոգելու այն եւ կեանքով ու խնդութեամբ լցնելու: Սակայն աստուածային կանքին հակառակ ընթացքը կեանքը դարձնում է հիմնախնդիրների ու մարտահրաւերների կիզակէտ: Նայենք արդի աշխարհին. այն ծանրաբեռնուած է բազում նեղութիւններով, զրկանքներով, հակասութիւններով ու բախումներով: Քրիստոսին եւ Նրա պատուիրանների մերժումը ծնում է պատերազմներ ու աղէտներ, վնասում երկիր մոլորակը, պատճառ դառնում հոգու եւ հոգեւորի տկարացման, նաեւ՝ աստուածաշնորհ կեանքի բռնի ընդհատման, սպանութիւնների, ինքնասպանութեան: Մեր օրերի համընդհանուր ճգնաժամը, որ բացատրուում է քաղաքական, տնտեսական, նիւթական պատճառներով, հիմնականում նոյնպէս օտարացման եւ հեռացման հետեւանք է դէպի Աստուած տանող լուսաւոր ուղուց, մեղսաւոր ընթացքով երկնային սիրոյ պարզելներից հրաժարման: Քրիստոս է կեանքը, Նրա պատուիրանները պահելով Աստուծոյ սէրը, ճշմարտութիւնը, սրբութիւնը, արդարութիւնն ու ողորմութիւնն են իրագործուում աշխարհում, առաջնորդելով այն դէպի բարին ու կատարեալը, դէպի լիակատար կեանք, ինչպէս մեր Տիրոջ երկրային կեանքն էր, որը հաւատ ու սէր էր երկնային Զօր հանդէպ եւ օրհնութիւն՝ մարդկանց համար:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, հաւատքն ու սէրը այն անսասան հիմքն են, որի վրայ հաստատոււմ մնալով պիտի զօրանայ նաեւ մեր երկրի ու ժողովրդի կեանքը, լցուի խնդութեամբ ու բերկրանքով: Զաւատքի եւ սիրոյ արգասիքները ազնուութեան, արդարութեան, կարեկցութեան, միմեանց սատարումի եւ զօրակցութեան բարի գործերն են, որ միշտ ուղեկից են լինելու մեզ, եթէ մեր ուղին չխտտորուի Քրիստոսի լուսաւոր ճանապարհից: Մեր օրերում, նաեւ մեր կեանքում հաւատաշէն գործերի, աստուածահաճոյ բազում ձեռնարկների կողքին ցաւով կարելի է տեսնել աստուածամերժ ընթացքներ, մեր ժողովրդի քրիստոնէական նկարագրին անյարիր բարքեր, ազգային նուիրական արժեհամակարգի խաթարում, նաեւ՝ հոգեւորի անտեսումով նիւթականի, դրամի գերարժեւորում, որը դառնում է գլխաւոր նպատակ՝ փոխանակ լինելու կեանքի արդար ու բարի ընթացքը կազմակերպելու միջոց: Նման դրսեւորումները, հաստատապէս, պարպում են կեանքը Քրիստոսի կենարար ներկայութիւնից, զրկում այն հոգեւոր ուրախութիւնից, գթասրտութիւնից, մարդասիրութիւնից, ազնիւ ու վեհ զգացմունքներից, տէրունաշնորհ փրկութիւնից: Քրիստոս զգուշացնում է մեզ այդ կործանարար ճանապարհից՝ ասելով. «Ի՞նչ օգուտ է մարդուն, եթէ ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի» (Մարկ. Ը 36): Սիրելիներ, մեր Տիրոջ ցոյց տուած ճշմարիտ սիրոյ օրինակով նորոգենք այսօր մեր կեանքը, որը տակաւին զերծ չէ կարիքներից ու դժուարութիւններից, մեր երկրի եւ ժողովրդի առաջընթացն ու բարօրութիւնը կասեցնող արտաքին եւ ներքին հիմնահարցերից: Ներկայ կեանքի խնդիրներն ու հրամայականները չեն կարող սասանել մեր կանքը՝ յաղթահարելու խոչընդոտներն ու արգելքները եւ միմեանց աջակից՝ ծառայելու մեր երկրի զօրացմանը, ազգային վերելքին եւ լուսաւոր գալիքի կառուցմանը: Մեր կեանքի առաջընթացը լուսառատ նոր հորիզոններ է պարզելու,

